ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզ Արտավազ
Ի փող թիվ 44
E-mail artawaz@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

03 հոկտեմբերի 2014 թ. N 31
գ. Արտավազ

ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջով *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 8 արտահերթ նիստի օրակարգը.

1. Արտավազ համայնքի քառամյա ծրագիրը հաստատելու մասին:

Կողմ - 5, **Դեմ -0,** **Ձեռնպահ-0**

Ա. Գրիգորյան
Գ. Խաչատրյան
Հ. Հովհաննիսյան
Ա. Մելքոնյան
Ն. Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզ Արտավազ
1 փող թիվ 44
E-mail artawaz@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

03 հոկտեմբերի 2014 թ. N 32-Ն
գ. Արտավազ

ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով պահանջով *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Արտավազի գյուղական համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը:
2. Ծրագրի կատարման վերահսկողությունը դնել համայնքի ղեկավար՝ Ռ. Հովհաննիսյանի վրա:

Կողմ - 5, **Դեմ -0,** **Ձեռնպահ-0**

Ա. Գրիգորյան
Գ. Խաչատրյան
Հ. Հովհաննիսյան
Ա. Մելքոնյան
Ն. Ստեփանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Հաստատված
Արտավազ համայնքի ավագանու
2014 թվականի դեկտեմբերի 03-ի
N 32 -Ն որոշմամբ

ԱՐՏԱՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

/2014-2017/

Արտավազ

2014թ.

Ի՞ՆՉ Է ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի քառամյա զարգացման ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է,որը մշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծություն և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական բաղադրությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտավազ համայնքի 2014-2017 թ. սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ ունենալով բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ - տնտեսական պայմանները;

Գալիք չորս տարում համայնքի զարգացմանծրագրային հիմնական ուղղություններն են՝

*պաշտպանել համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը

*բարելավել համայնքի բնակչության կոմունալ-կենցաղային պայմանները

*կատարել կապիտալ ներդրումներ համայնքի ասֆալտապատման բնագավառում

*ձեռնարկել միջոցներ համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ

*համայնքի բյուջեի միջոցները օգտագործել նպատակային՝ բարձրացնելով բնակչությանը մատուցվող ծառայությունների և սպասարկումների մակարդակը և որակը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Արտավազ համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, հարակից է Մեղրաձոր և Հանքավան համայնքների վարչական տարածքներին: Արտավազ համայնքը /նախկինում Թաքառլու/ հիմնադրվել է 1950թ.: Վարչատնտեսական առումով համայնքի կազմում ընդգրկվում է երկու բնակավայրեր՝ Արտավազ և Փյունիկ գյուղերը:
Մայրաքաղաք Երևանից հեռավորությունը կազմում է 68կմ, Հրազդան մարզկենտրոնից 24կմ : Բնակչությունը 1102 մարդ:
Ծովի մակարդակից միջին բարձրությունը կազմում է 2000մ: Համայնքը լեռնային գոտի: Համայնքի կլիման բարենպաստ է:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչությունը 01.01.2014 թվականի դրությամբ կազմում է 1102 մարդ: Ազգային առումով այն գրեթե միատարր է (հայեր՝ 99.0 %, ռուսներ՝ 1.0%,) :

Համայնքի տնային տնտեսությունները բաղկացած է 314 ընտանիքից: Միջին հաշվով 1 տնային տնտեսությունը կազմված է 2.5 մարդուց :

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Համայնքի ավագանին և ընտրվում են 4 տարի ժամկետով:

Արտավազ համայնքի ղեկավարը և գործող ավագանին ընտրվել է 2014 թվականի մարտին և բաղկացած է 5 անդամից: Աշխատակազմը (Հավելված 1) բաղկացած է 15

հաստիքից հետևյալ կառուցվածքով՝ համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար,(1), գլխավոր մասնագետներ (1), առաջատար մասնագետներ (2), քաղաքացիական աշխատողներ (3), տեխնիկական սպասարկման անձնակազմ (6):

1.4 ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են 2 բուժ կետ (1 – Արտավազ, 1- Փյունիկ), 2 միջնակարգ դպրոց (1 – Արտավազ, 1- Փյունիկ), 1 ակումբ, 2 գրադարան (1 – Արտավազ, 1- Փյունիկ) 2 կապի բաժանմունք (1 – Արտավազ, 1- Փյունիկ), մանկական ճամբարներ և հանգստյան տներ:

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Արտավազ գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ Կառավարության 31.03.1997 թվականի թիվ 51 որոշմամբ (Հավելված 2):

Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը բնութագրվում է որպես բավարար, ընդ որում աղյուսակ 1-ում առկա ենթակառուցվածքները ենթակա են վերանորոգման: Դրանց կապիտալ նորոգման, փոխարինման, ինչպես նաև նոր ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը ներկայացված է աղյուսակում:

1.6 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

- ՀՀ քաղաքացիներին պատկանող հողեր՝ 520.96հա,
- ՀՀ իրավաբանական անձանց պատկանող հողեր՝ 1047.90հա,
- Համայնքային պատկանելիության հողերը՝ 1577.74հա,
- Պետական հողեր՝ 4131.68հա:

Հողային ֆոնդի բաշխումը ըստ նպատակային նշանակության և հողատեսքերի

- Համայնքի վարչական տարածքը կազմում է 10636.70հա,
- Բնակարավայրեր՝ 109.19հա,
- Արտադրական նշանակության հողեր՝ 60.28հա,
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝7278.27հա,
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ նշանակության՝ 16.11հա
- Հատուկ պահպանվող տարածքներ՝ 1585.57հա,
- Անտառային գոտի՝ 1509.60հա,
- Ջրային ֆոնդեր՝ 77.68հա,

1.7 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2014-2017թ. նախատեսվում է Արտավազ համայնքում տեղադրել աղբամաններ: Պարբերաբար իրականացնել աղբահանությունը, սանիտարական մաքրումը, համայնքի փողոցների բարեկարգման և կառուցապատման աշխատանքները: Նախատեսել գյուղապետարանի շենքի տարածքի ցանկապատման և բարեկարգման աշխատանքներ:

1.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ , ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 8 կմ, Համայնքային և գյուղամիջյան ճանապարհներից մոտ 60% վերանորոգվել և բարեկարգվել են:

Գոյություն ունի համայնքի ենթակայության 3 կամուրջ, որոնք գտնվում են բարվոք վիճակում:

2013 թվականին երթևեկության անվտանգության նպատակով համայնքում իրականացվել է ճանապարհների գծանշում:

Առկա է տրանսպորտային հաղորդակցություն մարզկենտրոնի հետ:

1.9 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքի տարածքում գործում են 7 առևտրի օբյեկտներ, որոնց մի մասի գործունեությունը սեզոնային բնույթ է ունենում: Այս ոլորտի օբյեկտների գործունեությունը օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների շրջանակներում արդյունավետ վերահսկողություն է իրականացվում գյուղապետարանի աշխատակազմի կողմից: Նախատեսվում է առավելագույնս կանոնակարգել առևտրի և սպասարկումների ոլորտը:

1.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում են երկու միջնակարգ դպրոց՝ 135 աշակերտով: Դպրոցները ունեն վերանորոգման կարիք, ջեռուցման լոկալ համակարգ չունեն: Բարձրագույն ուումական հաստատություններում սովորում են 25 ուսանողներ:

<<Հայաստանի Սոց. Ներդրումների>> հիմնադրամի կողմից կառուցվում է նոր մանկապարտեզի շենք՝ նախատեսված երկու խմբի համար:

1.11 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1.12

Մշակույթի Համայնքում գործում են 2 գրադարաններ, որոնք գտնվում են Արտավազ և Փյունիկ գյուղերի դպրոցների շենքում: Գրադարանային հավաքածուի քանակը մոտ 5800 կտոր է, սպասարկվում է ինչպես համայնքի բնակչությանը, այնպես էլ հանգստացողներին: Գրադարանները գտնվում են բարվոք վիճակում:

1.13 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է 2 բուժ կետեր որոնք ապահովված են սարքավորումներով:

1.14 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի աշխարհագրական դիրքը բարենպաստ է համայնքի զարգացման
համար: Համայնքը գտնվում է Հրազդան մարզկենտրոնից 24կմ հյուսիս-
արևմուտք, մայրաքաղաք Երևանից հեռավորությունը կազմում է 68 կմ,

- Հասանելի է ֆիքսված հեռախոսակապը, ինտերնետը, բջջային կապը:
- Համայնքի բոլոր փողոցները լուսավորված են,
- Համայնքը ամբողջությամբ գազաֆիկացված է:

1.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ներդրումը գյուղապետարանում արդյունավետ է դարձրել մարզպետարանի, նախարարությունների և մի շարք համայնքների հետ,
- Հետևողական կերպով բարեկարգվել և գծանշվել են միջհամայնքային բոլոր ճանապարհները, անվտանգ երթևեկության համար ստեղծվել են բավարար պայմաններ:

1.16 Լայնածավալ աշխատանքներ են իրականացվել համայնքային և գյուղամիջյան տարածքների լուսավորման համար:

2.ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

<<Հայաստանի Սոց. Ներդրումներ>> հիմնադրամի կողմից կառուցվում է նոր մանկապարտեզի շենք՝ նախատեսված երկու խմբի համար:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3.1 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային պայմանները, համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ բնակավայր:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

Ծրագրի ընդունման և իրականացման հիմնական նպատակներն են քաղաքի ազգաբնակչության կյանքի որակի բարելավումը և Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխան զբոսաշրջային կենտրոնի վերածելը, որը կնպաստի՝

- Քաղաքի սոցիալ – տնտեսական խնդիրների լուծմանը և բարելավմանը,
- Ներքին և միջազգային զբոսարջության զարգացմանը,
- Մշակութային կյանքի աշխուժացմանը,
- Ինչպես ձմեռային, այնպես էլ այլ սպորտաձևերի զարգացմանը,
- Քաղաքի կենցաղային և էկոլոգիական խնդիրների լուծմանը,
- Լիովին կլուծվի քաղաքի ազգաբնակչության զբաղվածության խնդիրը,
- Բնակչությանը մատուցվող *ծառայությունների և սպասարկման* մակարդակի և որակի բարձրացմանը.
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի և աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպմանը:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

4.1 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի գլխավոր հատակագիծ՝ հաստատված ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի 29–Ն որոշումով: Սակայն նախատեսվում է նոր գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի կազմում, քանի որ գոյություն ունեցող գլխավոր հատակագիծը չի ընդգրկում համայնքի ամբողջ վարչատարածքային սահմանը և չի համապատասխանում քաղաքաշինական զարգացման ներկայիս պահանջներին: Համայնքի զարգացման քառամյա ծրագրի շրջանակներում՝ հաշվի առնելով համայնքի քաղաքաշինական առանձնահատկությունները, նախատեսվում է կազմել համայնքի քաղաքաշինական կանոնադրություն: Այս փաստաթղթերով հիմնականում կսահմանվեն համայնքի քաղաքաշինական զարգացման առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային փուլերը:

4.2 Աղբահանություն և փողոցների մաքրում

Նախատեսվում է շարունակել ուշադրության կենտրոնում պահել աղբահանության և փողոցների մաքրման աշխատանքները:

4.2.1 Կանաչ տարածքների խնամք և ոռոգում

Կշարունակվեն պարբերաբար ծառատումները և սանմաքրումը: Կկատարվեն ծառատնկման աշխատանքներ, և կվերականգնվի տարածքների իրական նշանակությունը որպես հանգստի գոտիներ:

4.2.2 Արտաքին լուսավորություն

Արտաքին լուսավորությունը ընդգրկում է համայնքի գրեթե ողջ տարածքը:

4.3 ՏՐԱՆՍՊՈՐՏ , ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2014-2017 թվականներին նախատեսվում է շարունակել ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ: Նախատեսվում է կատարել մայթերի, բակային տարածքների վերանորոգման, երթևեկության հիմնական նշանների վերականգնման աշխատանքներ:

4.4 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

Նախատեսվում է ուշադրության կենտրոնում պահել ոլորտի օբյեկտների գործունեության համապատասխանությունը օրենդրական պահանջներին:

4.5 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաջնահերթ անհրաժեշտ է պահպանել համայնքում առկա ջրային պաշարները աղտոտվածությունից: Իրականացնել համայնքի տարածքի մաքրման և սանիտարա – հիգենիկ վիճակի հսկողություն:

4.6 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Առաջնահերթ խնդիրներից է հանդիսանում կրթական որակի բարձրացումը՝ ոլորտը համալրելով նոր երիտասարդ կադրերով և տանել առավել նպատակասլաց և արդյունավետ աշխատանք:

4.7 ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի բնագավառում ոլորտի առաջնահերթ խնդիրներից է համարվում մշակույթի կենտրոնի կառուցումը, որը կնպաստի համայնքի ազգաբնակչության ազատ ժամանակի առավել բովանդակալից կազմակերպմանը:

4.8 ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

2014-2017 թվականներին համայնքի միջոցներով կկառուցվեն հաշմանդամների տեղաշարժի համար թեք հարթակներ հասարակական վայրերում և բազմաբնակարան շենքերում: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կիրականացվի համայնքում սոցիալական պլանավորման քաղաքական մշակում:

4.9ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկատվական կենտրոններ

Գյուղապետարանում տեղադրված վեբ-տեխնոլոգիաների վրա հիմնված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ)

հնարավորություն է տալիս ավտոմատացնել և արագացնել Տեղական ինքնակառավարման մի շարք գործընթացներ, մասնավորապես՝ բյուջետավորումը և գործավարությունը: Տեղեկատվական կենտրոնը բնակչությանը տրամադրում է տեղեկատվություն իրեն հուզող յուրաքանչյուր հարցի վերաբերյալ: Վարվում է զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը՝ տեղական զինկոմիսարիատի և ռեգիստրի հետ համագործակցությամբ:

Այս ամենը հնարավորություն է տալիս բնակչությանը առավել ակտիվորեն մասնակցել տեղական ինքնակառավարմանը, իսկ գյուղապետարանի գործունեությունը դառնում է ավելի թափանցիկ և հրապարակային:

4.ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակիչների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով գյուղապետարանում շարունակվում են համայնքի ղեկավարի ընդունելության օրերը:

Գյուղապետարանի համապատասխան մասնագետները համայնքի քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների համար կկատարեն խորհրդատվական աշխատանք, կքննարկեն նրանց իրավունքների խախտումների վերաբերյալ գանգատներն ու դիմումները, կաջակցեն նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Կպահպանվեն գյուղապետարանի կողմից կնքվող պայմանագրերի, ավագանու և համայնքի ղեկավարների որոշումների օրինականության ապահովումը, անհրաժեշտության դեպքում համայնքի շահերը կներկայացվեն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, ինչպես նաև դրանք կպաշտպանվեն դատարանում:

4.11 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպվող դասընթացներին կշարունակվեն մասնակցությունը գյուղապետարանի պատասխանատու անձանց՝ գործնականում դրանց համար ոլորտային համապատասխան լուծումներ մշակելու նպատակով:

Կշարունակվեն մշակվել քաղաքացիական պաշտպանության պլանները՝ անցնելով դրանցում ներգրավված կառուցների՝ իրենց մասնակցության ձևաչափի վերաբերյալ իրազեկության ավելի բարձր մակարդակի:

6. ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը հիմք է հանդիսանալու համայնքի տարեկան ծրագրերի և բյուջեների մշակման ու կատարման աշխատանքները կազմակերպելիս:

Շատ կարևոր է սեփական եկամուտների լրացուցիչ աղբյուրների ավելացումը,

ֆինանսական միջոցների արդյունավետ հավաքագրման կազմակերպումն ու դրանց նպատակային օգագործումը:

2014-2017 թվականներին համայնքային բյուջեները անհրաժեշտ է մշակել որպես զարգացման ծրագրային բյուջեներ, որպեսզի հնարավոր լինի դրանցով իրականացնել սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք ծրագրեր, ինչպես նաև ընթացիկ և հիմնական վերանորոգման աշխատանքներ:

Գյուղապետարանը կմշակի զարգացման մի շարք ծրագրեր, որոնք կներկայացվի ՀՀ Կառավարություն: Ծրագրերի իրականացման նպատակով նոր պայմանագրեր կկնքվեն ինվեստիցիոն հիմնադրամների հետ, կներգրավվեն նոր աղբյուրներ՝ տարբեր սոցիալական հիմնադրամների կողմից:

Արտավազի գյուղապետարանի աշխատակազմի կառուցվածքը

Աղյուսակ 1

Կառույց	Նորոգման/վերանորոգման /փոխարինման կարիք
Մշակույթի կենտրոն	Նոր շենքի կառուցում
Ասֆալտապատում	Հիմնանորոգում
Գերեզմանոցի ցանկապատում	Վերանորոգում, կառուցում
Աղբամանների տեղադրում	նորոգում
Գյուղապետարանի շենքի տարածքի ցանկապատում և բարեկարգում	կառուցում

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Աղյուսակ 2. Համայնքի 2013թ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2014-2016թթ բյուջեների մուտքերի կանխատեսումը

Հ/հ	Մուտքերի անվանումը	2014թ նախատ	2014թ փաստ	2015թ կանխ	2016թ կանխ	2017թ կանխ
1	2	3	4	5	6	7
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ	**22117,2**	**15010,4**	**31117.2**	**41117.2**	**71117.2**
I	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	21117,2	14217,9	21117,2	21117,2	21117,2
1	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	**10144,0**	5995,1	**10144,0**	**10144,0**	**10144,0**
1,1	Գույքային հարկեր անշարժ գույքից	8796,4	5015,3	8796,4	8796,4	8796,4
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	2175,4	1504,6	2175,4	2175,4	2175,4
	Հողի հարկ	6621,0	3510,7	6621,0	6621,0	6621,0
1,2	Գույքային հարկեր այլ գույքից	937,6	721,8	937,6	937,6	937,6
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	937,6	721,8	937,6	937,6	937,6
1,3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	**410,0**	258,0	**410,0**	**410,0**	**410,0**
	Տեղական տուրք	410,0	258,0	410,0	410,0	410,0
1,4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**
	Պետական տուրք	0,0	0,0	0,0	0,0	0,0
1,5	Այլ հարկային եկամուտներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	10293,2	7877,4	10293,2	10293,2	10293,2
2,1	Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
2,2	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
2,3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
ա)	Պետական բյուջեից ֆինանասական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	8851,6	6638,6	8851,6	8851,6	8851,6
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	1441,6	1201,3	1441,6	1441,6	1441,6
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)					

II	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	1000,0	792,6	10000,0	20000.0	50000.0
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր					
	Անշարժ գույքի իրացումից մուտքեր					
2	Պաշարների իրացումից մուտքեր					
3	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր					
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	1000,0	792,5	10000,0	20000.0	50000.0
	Հողի իրացումից մուտքեր	1000,0	792,5	10000,0	20000.0	50000.0
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ						
	ԸՆԴԱՄԵՆԸ	7780,9				
Ա	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ					
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
2	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
2,1	Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն					
I	Իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցության,պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի բացառությամբ հողերի, այդ թվում՝ անավարտ շինարարության օբյեկտների մասնավորեցումից առաջացած միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր					
2,2	Փոխատվություններ					
	Փոխատվությունների տրամադրում					
2,3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	7780,9	0,0	342666,1		
	ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ					
1	ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ					
1,1	Արժեթղթեր					
1,2	Վարկեր					
1,3	Փոխատվություններ					
	Փոխատվությունների ստացում					
	ստացված փոխատվությունների գումարի մարում					

դ)	ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ					
2,4	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
3	ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**680,0**	**345,4**	**680,0**	**680,0**	**680,0**
3,1	Տոկոսներ					
3,2	Շահաբաժիններ					
3,3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	480,0	307,4	480,0	480,0	480,0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	480,0	307,4	480,0	480,0	480,0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր					
3,4	Համայանքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	0,0	0,0	0,0	0,0	0,0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակած լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
3,5	Վարչական գանձումներ	200,0	38,0	200,0	200,0	200,0
	Տեղական վճարներ	200,0	38,0	200,0	200,0	200,0
	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող)վճարներ	0,0	0,0	0,0	0,0	0,0
3,6	Մուտքեր տույժերից, տուգանքներից					
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ					
	Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնածպայմանգրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերց					
3,7	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3,8	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ					
3,9	Այլ եկամուտներ					

Հավելված N1


Համայնքի ղեկավար
Աշխատակազմի քարտուղար
Համայնքի ղեկավարի տեղակալ
Գլխավոր մասնագետներ
Առաջատար մասնագետ
Առաջատար մասնագետ
Քաղաքացիական աշխատողներ
Տեխնիկական սպասարկում

Հավելված 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Հիմնական միջոցի անվանումը	Համախառն հաշվեկշռային արժեք
1	Հանդիսությունների սրահ	22750662
2	Արտավազի գյուղապետարան	56969560
3	Բնակելի շենք	3541
4	Սիլոսի հոր	40838
5	Կովանոց (դարբնոց)	1012180
6	Փյունիկի ակումբ	17763593.5
7	Արտավազի մանկապարտեզ	1754000
8	Տրակտոր "Սոնալիկա"	1818000
9	Էլեկտրոցանց	25000
10	Ջրմուղի արտաքին և ներքին ցանց	1067512
11	Կոյուղու ներքին ցանց	775075
12	Ջրի ճնշման թուլանոց	56625
13	Ջրմուղ կոյուղու ներքին ցանց	6225
14	Փյունիկի անավարտ շինություն	31000
15	Լուսավորության ցանց	21048219
16	Ջրի ներքին ցանց 3 կմ	7500000
17	Փյունիկի գազատար 3639 մ	43201522
18	Ավտոճանապարհ	3996750
19	Գազատար	7100000
20	TOYOTA CAMRY 2,5 GAS	13300000
	Ընդամենը	*200220303*